ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 59-Ա «03» 03 2022թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2022 թվականի մարտի 3-ի № 59-Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության (այսուհետ՝ Վարչություն) աշխատանքային ծավալը կտրուկ ավելացմամբ՝ պայմանավորված Վարչության կանոնադրական խնդիրներից բխող գործառույթների (պետական գույքի կառավարման բնագավառում իրականացվող բարեփոխումները, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «Պետական գույքի արդյունավետ կառավարում» 6.7-րդ կետով և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված առաջադրանքների պատշաճ և սահմանված ժամկետում կատարման պահանջները, որոնք վերաբերում են պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման և սպասարկման գործընթացները կանոնակարգող իրավական ակտերում լրացումների և փոփոխությունների կատարմանը, նոր իրավական ակտերի մշակմանը, նաև պետական գույքի կառավարման ոլորտի և դրան առնչվող ոլորտների ռազմավարական փաստաթղթերից բխող կանոնակարգերի մշակմանը) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության ոլորտում առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, հողային օրենսգրքերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Պետական գույքի կառավարման մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, պետական գույքի կառավարման

2021-2023 թվականների ծրագրի, պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման և սպասարկման գործընթացները կանոնակարգող իրավական ակտերի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետն մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքը, մասնավորապես՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի «պետական գույքի արդյունավետ կառավարում» 6.7-րդ կետով սահմանված աշխատանքների իրականացում,

բ. ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ, որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի պետական գույքի կառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի մշակմանը ուղղված աշխատանքների իրականացում,

գ. պետական գույքի կառավարման ռազմավարությունից բխող պետական գույքի կառավարման բարեփոխման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

դ. պետական գույքի կառավարման ոլորտին ուղղակիորեն առնչվող ռազմավարությունների և օրենսդրական ակտերի հիման վրա գույքային հարաբերությունները կանոնակարգող ոլորտային նոր իրավական ակտերի մշակման մասնակցություն և առաջարկությունների ներկայացում,

ե. պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկման աշխատանքներին մասնակցություն, առաջարկությունների և հաշվետվությունների ներկայացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է վեց ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«ե» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի «պետական գույքի արդյունավետ կառավարում» 6.7-րդ կետով սահմանված աշխատանքներն իրականացված են.

բ. ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի պետական գույքի կառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի մշակմանը ուղղված աշխատանքներն իրականացված են,

գ. փորձի փոխանակման, պետական գույքի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով՝ այլ երկրների պետական գույքի կառավարման ոլորտը համակարգող գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով փաստաթղթերի նախապատրաստական աշխատանքներն իրականացված են,

դ. պետական գույքի կառավարման ռազմավարությունից բխող պետական գույքի կառավարման բարեփոխման վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են,

ե. պետական գույքի կառավարման ոլորտին ուղղակիորեն առնչվող ռազմավարությունների և օրենսդրական ակտերի հիման վրա գույքային հարաբերությունները կանոնակարգող ոլորտային նոր իրավական ակտերի մշակման առաջարկությունները ներկայացված են:

է. պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկման աշխատանքների վերաբերյալ առաջարկությունները և հաշվետվությունները ներկայացված են: